

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏՆ ԱՅՑԵԼԵԼ Ե ԳԱՌՆԻԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

13.06.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Չարությունյանն այցելել է Գառնիի N 1 հիմնական դպրոց:

Այցելության ընթացքում Կոտայքի մարզպետը շրջել է դպրոցի մասնաշենքում, տեղում ծանոթացել շենքային պայմաններին և հնարավորություններին, ինչպես նաև ավարտական քննությունների կազմակերպական գործընթացներին:

Այնուհետև մարզպետ Ա. Չարությունյանը հանդիպում է ունեցել դպրոցի մանկավարժների հետ: Հանդիպման ընթացքում մարզպետն անդրադարձել է ուսումնադաստիարակչական աշխատանքների ուղղություններին, ուսուցիչների հետ համատեղ քննարկել կրթական բարեփոխումների արդյունքներին և կրթօջախի գործառույթներին վերաբերող հարցեր:

Աշխատանքային այս այցելության շրջանակներում ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Չարությունյանը դպրոցի աշխատակիցների հետ քննարկել է նաև ուսումնական տարվա ավարտի և նոր ուսումնականի մեկնարկի հետ կապված մի շարք ընթացակարգային հարցեր ևս՝ հաստատության ղեկավարությանը տալով համապատասխան հանձնարարականներ: